Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր N ԳԾ-54

ք. Երևան 13 հունվար 2025թ.

ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի Ծառայությունը՝ ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Անի Գևորգյանի, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ՓՐՈՄՈՇՈՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Մկրտչյանի, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, ով գործում է կանոնադրության հիման վրա այսուհետ միասին հիշատակվելիս կանվանվեն՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով կատարողը պարտավորվում է պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

1.2. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է Պատվիրատուի տրամադրել վերջինիս կարիքների համար «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ գնումների վերաբերյալ գնումների համակարգողին վերապահված լիազորությունների կատարման ծառայություններ.

Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին տրամադրել ծառայություն /գրավոր և բանավոր/ ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/16 (Հատուկ նշանակության էլեկտրական ապրանքներ) և ՀՀՊԾ-ԳՀԾՁԲ-24/17 (տվյալների փոխանցման ծառայություններ) գնման ընթացակարգերի մասով, (PPCM, Armeps, e-auction և պետական գանձապետական (treasury) համակարգերի միջոցով) և կազմակերպել վերջինիս կարիքների համար օրենսդրությամբ սահմանված գործընթացները::

1.3. Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվում պայմանագրի ստորագրման պահից մինչև ընթացակարգերի արձանագրության հանձնումը, Բայց ոչ ուշ քան 15.12.2025թ:

1.4. Ծառայությունները համարվում են պատվիրատուի կողմից ընդունված կատարողի մատուցված ծառայությունների վերաբերյալ ներկայացված հաշիվ ապրանքագրերը ստորագրելու պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. **Կատարողը պարտավոր է՝**

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, ողջամիտ ժամկետում.

2.1.3. Պատվիրատուի պահանջով անհատույց վերացնել ծառայությունների մատուցմանն առնչվող հայտնաբերված բոլոր թերությունները.

2.2. **Կատարողն իրավունք ունի՝**

2.2.1. Պահանջել սահմանված ժամկետում վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված ծառայության վճարը:

2.3. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել կատարողի ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. Պահանջել ծառայությունը մատուցել պատշաճ որակով, իսկ հայտնաբերված թերությունները վերացնել ողջամիտ ժամկետում և անհատույց:

2.4. **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.4.1. Իր կողմից փաստաթղթերը Կատարողին ուղարկել Կատարողի էլեկտրոնային հասցեին, որը կդիտարկվի որպես պատշաճ ուղարկում:

2.4.2. Փաստաթղթերը ուղարկել Կատարողի էլեկտրոնային հասցեին, որը կդիտարկվի որպես բացառապես իր կողմից ուղարկված հաստատված տարբերակ:

2.4.3. Սահմանված ժամկետում և կարգով վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված ծառայությունների մատուցման գինը:

2.4.4. Ստորագրել և հաստատել հաշիվ ապրանքագիրը այն կատարողի կողմից ներկայացվելու պահից 3 (երեք) օրվա ընթացքում, եթե չունի չստորագրման հիմնավոր պատճառներ, որոնց առկայության վերաբերյալ պարտավոր է 1-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնել կատարողին:

2.4.5. Կետում նշված գումարը սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարումը ուշացնելու դեպքում վճարել տուգանք, վճարման ենթակա գումարի 0.15%-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1.1. Սույն պայմանագրով մատուցված Ծառայության գինը կազմում է՝ 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը և պարտադիր այլ վճարները, որը յուրաքանչյուր կիսամյակի համար ենթակա է վճարման հաշիվ ապրանքագիրը ստորագրելու պահից 3 (երեք) օրյա ժամկետում:

3.1.2. Ծառայության գինը ներառում է կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.1.3. Պատվիրատուի կողմից ծառայության համար սահմանված գումարը վճարվում է կատարողին ՀՀ արժույթով անկանխիկ՝ փոխանցելով կատարողի կողմից ներկայացված հաշվեհամարին:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում գնումների էլեկտրոնային տեղեկագրի տեխնիկական խափանման հետևանքով ծառայության մատուցման անհնարինության և/կամ թերությունների համար, ինչպես նաև այն դեպքում:

4.2. Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Գաղտնիություն

5.1. Կողմերը հաստատում և ընդունում են, որ սույն պայմանագրի կատարման շրջանակներում միմյանց մասին հայտնի դարձած ցանկացած տեղեկատվություն, ներառյալ՝ Կողմերի անհատականացման և կոնտակտային տվյալները, ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, հասցեն կամ որևէ այլ անհատականացնող տվյալ,

այդ թվում՝ աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվությունը հանդիսանում է գաղտնի տեղեկատվություն և բացահայտման կամ երրորդ անձանց որևէ այլ եղանակով հրապարակման ենթակա չեն: Կողմերը իրավունք չունեն նշված տեղեկությունները որևէ կերպ տրամադրել և/կամ այլ կերպ հասանելի դարձնել երրորդ անձանց, առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնությունը ստանալու:

5.2. Սույն պայմանագրի 5.1 կետում նշված տեղեկությունը գաղտնի է համարվում պայմանագրի գործողության ընթացքում և դրա ավարտից հետո ևս 1 (մեկ) տարի:

5.3. Պայմանագրով սահմանված գաղտնիության պահանջները խախտելու դեպքում Կողմը մյուս Կողմի առջև պատասխանատվություն է կրում գաղտնի տեղեկատվությունները հրապարակելու հետևանքով պատճառված վնասների, ներառյալ գործարար համբավի արատավորման համար:

5.4. Կողմը մյուս Կողմին առնչվող ցանկացած տեղեկատվություն բացահայտելու կամ որևէ այլ եղանակով երրորդ անձի (անձանց) հայտնի դարձնելու դեպքում վճարում է տուգանք 2 000 000 (երկու) միլիոն ՀՀ դրամ գումարի չափով:

6. Անհաղթահարելի ուժ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից փոխադարձ բոլոր պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

6.2. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով: Անհաղթահարելի ուժ է համարվում այն հանգամանքը, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

6.3. Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե պարտավորությունների պատշաճ կատարման անհնարինությունը տեղի է ունեցել բնական կամ տեխնոգեն բնույթ կրող արտակարգ դրությունների, ռազմական գործողությունների, գործադուլների հետևանքով, օրենսդրության փոփոխության, նորմատիվ իրավական ակտերի ընդունման, ՀՀ պետական գործիչների չծրագրված ելույթների և այլ իրավիճակների հետևանքով, որոնք կապված չեն Կողմերի կամքից, ինչպես նաև ՀՀ տարածքում էլեկտրոլարերի աշխատանքների ձախողման, Հեռուստաալիքի եթերի՝ չծրագրված անջատման, ինչը անհնարին է դարձնում Կողմի՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

6.4. Կողմը, որի համար ստեղծվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումն անհնարին դարձնող իրավիճակ (անհաղթահարելի ուժ), պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել մյուս Կողմին վերը նշված հանգամանքների սկզբի և ավարտի մասին: Նման պարագայում Կողմերը կարճ ժամանակահատվածում պետք է խորհրդակցեն և ձեռնարկեն համապատասխան քայլեր և միջոցառումներ:

6.5. Նման հանգամանքների առաջացման մասին չծանուցելը կամ ոչ ժամանակին ծանուցելը ծանուցման պարտականություն կրող Կողմին զրկում է հետագայում իր կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու, ժամկետանց կատարելու հետևանքով առաջացած պատասխանատվությունից ազատվելու համար այդ հանգամանքներին հղում կատարելու իրավունքից:

6.6. Այն դեպքում, երբ մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չի մուտքագրվել համակարգ կատարողից անկախ հանգամանքներում տեխնիկական խափանման հետևանքով, ապա դա դիտարկվում է որպես անհաղթահարելի ուժ և կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

7.2. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվում է դատարանի քննությանը:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի և/կամ նրանց լիազորված ներկայացուցիչների կողմից:

8.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուրին տրվում է մեկ օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայություն	«ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/1	ք. Գյումրի, Ղուկասյան 142
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011046613	Հ/Հ 2052822261121001
ՀՎՀՀ՝ 02902959	ՀՎՀՀ 05556222
գլխավոր քարտուղարի ՊԺԿ	Տնօրեն
_____ Ա. Գևորգյան	_____ Կ. Մկրտչյան